



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՈՒԹԵՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Մայիսի 6-ին, չորեքշաբթի օրը, Երևանում, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նիստերի դահլիճում, գումարվում է Հայաստանի գրողների ութերորդ՝ հերթական համագումարը, որին մասնակցում են, պատգամավորներից բացի, արվեստի, գիտության, հայ մշակույթի գործիչներ, եղբայրական հանրապետությունների գրական կազմակերպությունների պատվիրակություններ, սփյուռքահայ գրականության ներկայացուցիչներ:

Համագումարը ներածական խոսքով բաց է անում հայ գրականության ավագ, բանաստեղծ Սարմենը:

Այնուհետև ընտրվում են համագումարի ղեկավար մարմիններ՝ նախագահություն, քարտուղարություն, մանդատային և խմբագրական հանձնաժողովներ:

Բոլոր ներկաները մեկ ընդհանուր հոտնկայս հարգում են նախորդ համագումարից հետո վախճանված սովետահայ գրողների հիշատակը:

Միաձայնությամբ հաստատվում է համագումարի հետևյալ օրակարգը.

1. Հայաստանի գրողների միության վարչության հաշվետու զեկուցումը՝ հարակից զեկուցումներ՝ գրական տարբեր ժանրերի և սփյուռքահայ առաջադիմական գրականության մասին:

2. Հայաստանի գրողների միության վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը:

3. Հայաստանի գրողների միության ղեկավար մարմինների և ՍՍՀՄ գրողների յոթերորդ համագումարի պատգամավորների ընտրություններ:

Համագումարում Հայաստանի գրողների միության վարչության հաշվետու, բովան-

դակալից և ծավալուն զեկուցումով հանդես է գալիս վարչության առաջին քարտուղար Վարդգես Պետրոսյանը՝ «Գրականության քաղաքացիական վսեմ պարտքը» թեմայով, որի մեջ նա նշում է. «Հավաքվել ենք Հայաստանի գրողների հերթական՝ ութերորդ համագումարին՝ վերլուծելու մեր անցած հինգ տարիների ստեղծագործական արդյունքները, հավաքական ջանքերով որոշելու նրա զարգացման միտումները»:

Ապա զեկուցողը կանգ է առնում հաշվետու ժամանակաշրջանում հայ գրականության զարգացման մի շարք էական երևույթների, նոր ճանապարհների և խնդիրների վրա, այդ թվում՝ արձակի, բանաստեղծության, գեղարվեստական հրապարակախոսության, գրական քննադատության, պատմական էսսեների, թատրոնի, ազգային դրամատուրգիայի, հայրենադարձության, գրական ստեղծագործությունների ռուսերեն և օտար լեզուներով թարգմանության վրա: «Թարգմանությունը, — նշում է զեկուցողը, — հսկայական նշանակություն ունի ազգային գրականության և լեզվի զարգացման համար: Դասական կամ արդիական արժեքավոր երկի թարգմանությունը, ժամանակին և արվեստով կատարված թարգմանությունը ընթերցողին պահում է իր մայրենի լեզվի մագնիսական դաշտում: Այդ թարգմանությունը նաև նոր ու քարձր չափանիշներ է պարտադրում տվյալ գրականությանը, և ընդերքողն իր գրողին տեսնում է համամիութենական և միջազգային գրականության հոսանքի մեջ»:

Ինչպես հայտնի է, «թարգմանական գործը արժեքավորելու նպատակով Հայաստանի գրողների միությունը 1979-ին առաջին



անգամ անցկացրեց և այնուհետև երեք տարին մեկ պարբերաբար կանցկացնի թարգմանական արվեստի տոն՝ Չարենցի անվան մրցանակներով, որ կշնորհվեն նաև եղբայրական մյուս հանրապետությունների թարգմանիչներին: Գրողների միության ամենամյա մրցանակներից մեկը նույնպես կշնորհվի թարգմանիչներին:

Զեկուցողը ապա հանգամանորեն կանգ է առնում տիյուրքահայ գրականության զարգացման, հայրենիք-սփյուռք գրական կապերի և հարցերի վրա: «Եժ տարի գոյատևած սփյուռքը այսօր ևս ծանրագույն խնդիրներ ունի,— նշում է Վարդգես Պետրոսյանը,— և այդ խնդիրների լուծման շրջափայլ մեջ ինչպես անցյալում, այսօր էլ երկրորդական դեր չէ, որ փնակված է գրականությանը: Կարևորագույն նշանակություն ունի տիյուրքահայ երիտասարդության մեջ ազգային հպարտության զգացմունքի պերդավորումը: ...Ուրեմն հարկավոր է թարգմանել, իրենց մատչելի լեզուներով նրանց հասցնել մեր դասական ու արդի՝ արևելահայ, արևմտահայ, սովետահայ, տիյուրքահայ գրականության արժեքավոր գործեր: Պետք է թարգմանվեն նաև հայրենիքի մասին գրված գրքերը, առաջին հերթին՝ տիյուրքահայ գրողների և մտավորականների ճանապարհորդական տպավորությունները, էսսեները»:

Համագումարի գլխավոր զեկուցման մեջ կարևորությամբ նշվում է նաև «այն աշխատանքների մասին, որ հանրապետությունում կատարվում է հայ քաղաքական մշակույթի իմաստավորման և արժեքավորման, այդ ժառանգության անթառամ արժեքները ժողովրդին հասցնելու ուղղությամբ» մեծանուն հայ գրողների հորելյանների կատարմամբ: Հաջորդ տարիներին նշվելու են Ս. Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգություն» հանձնարելու մատյանի հազարամյակը, Բաժֆու ծննդյան 150, Վարուժանի և Տերյանի հարյուրամյակները: Հայաստանի գրողների միության քարտուղարը իր զեկուցումը եզրակացնում է հետևյալ հայտնադրական ու իրավ հաստատումով.

«Մենք այսօր ապրում ենք եղբայր ժողովուրդների մեծ տան մեջ՝ գոտեպնդված

միասնական ընտանիքի վսեմ զգացումով: Այս միասնության մեջ, ինչպես եղբայրական ժողովուրդները, մենք ևս չկորցրինք և չենք կորցնի ո՛չ ինքնատիպ մեր դիմագիծը, ո՛չ էլ ազգային հպարտության նվիրական զգացումը...

Ծաղկեց, պտղավորվեց նաև մեր մշակույթի կենաց ծաղը: Մենք ի գործու եղանք ոչ միայն նորն ստեղծելու, այլև տեղ կանգնեցինք հոգևոր մշակույթի մեր դարավոր զանձներին: Պետական հոգատարությամբ գոտեպնդվեց մեսրոպյան հայերենը՝ մեր ժողովրդի պետական լեզուն, որի կենսունակության և հավերժության պահպանմանից մեկը արդի և գալիք հայ գրականությունը: Եվ, սովետական մեծ գրականության արժանավոր հայրերից և զավակներից մեկը:

Ապրենք ժողովրդի շահերով, կիսենք նրա ուրախությունն ու վիշտը, հաստատենք կյանքի նշմարությունը, մարդասիրական մեր վսեմ իդեալները նոր, ազնիվ և տաղանդավոր գրքերով արտահայտենք մեր ժամանակը՝ իր ողջ վեհությամբ և դրամատիզմով: Սա է մեր կյանքի ողջ ստեղծագործության գերագույն խորհուրդը»:

Մայիսի 7-ին, հինգշաբթի օրը, համագումարը շարունակում էր իր աշխատանքները:

Համագումարի երկրորդ նիստում տեղի են ունենում գլխավոր զեկուցման շուրջ մտքերի հետաքրքիր փոխանակություններ: Արտասանվում են մի շարք պատգամավորների և հյուրերի կողմից ողջույնի խոսքեր:

Մայիսի 8-ին, ուրբաթ օրը, տեղի է ունենում Հայաստանի գրողների միության նորընտիր վարչության պլենումը, որը քննարկում է կազմակերպական հարցեր:

Պլենումը Հայաստանի գրողների միության վարչության նախագահ է ընտրում Վարդգես Պետրոսյանին և վարչության չորս քարտուղարներին: Ընտրվում է նաև Հայաստանի գրողների միության վարչության նախագահություն, և հաստատվում է գրական մամուլի օրգանների խմբագիրներ:

Դրանով Հայաստանի գրողների ունեւորդ համագումարն ավարտում է իր աշխատանքները:

